

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13**

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ 11.04.2018թ. մարզի համայնքների և բնակավայրերի վարչական ղեկավարների հետ անցկացված խորհրդակցության**

11.04.2018թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին**

Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ

Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ

Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ

Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Լոռու մարզի համայնքների ղեկավարներ և բնակավայրերի վարչական ղեկավարներ

**Օր ա կ ա ր գ ու մ՝**

2. «Մաքուր Հայաստան» ծրագրի իրականացման մասին

/Զեկ. Հ.Թադևոսյան/

3. ՀՀ Լոռու մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս-Ալպեր Լազուրի Ափ ռեգիոնի միջև համագործակցության համաձայնագրի մասին

/Զեկ. Լ. Ասլանյան/

4. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների մասին

/Զեկ. Հ.Պապոյան/

5. ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված անշարժ գույքի ցանկի նույնականացման տվյալների մասին

/Զեկ. Ա.Օհանյան/

**Ո Ր Ո Շ Վ Ե Ց**

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս-Ալպեր Լազուրի Ափ ռեգիոնի միջև համագործակցության համաձայնագրին

2. Առաջարկել Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

ա/ Ակտիվ մասնակցություն ունենալ «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում անցկացվող առաջիկա շաբաթօրյակին: Այդ նպատակով կապի մեջ լինել մարզային շտաբի հետ և պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել զանգվածային լրատվամիջոցներին:

բ/ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ:

գ/ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված գույքի ցանկի նույնականացման աշխատանքների ճշգրտման նպատակով համապատասխան մասնագետներ գործուղել մարզպետարան՝ աշխատանքները պատշաճ կերպով իրականացնելու համար:

**ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**